ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/133/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 30-ին քննելով Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Ռոբերտի Գալստյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/133/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2022 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Կուսակցության տարեկան հաշվետվություն) ստուգման

արդյունքում վերհանված տվյալները, իրականացրել է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Ռոբերտի Գալստյանի՝ 2023 թվականի մայիսի 25-ին ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների ստուգում, որի արդյունքում պարզել է.

1.2 Արթուր Ռոբերտի Գալստյանի Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» կամ «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում ոչ ամբողջական է հայտարարագրել ստացված եկամտի վերաբերյալ տվյալը, մինչդեռ Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների համաձայն՝ Արթուր Ռոբերտի Գալստյանը 1,000,000 ՀՀ դրամ նվիրատվություն է կատարել կուսակցությանը և Արթուր Ռոբերտի Գալստյանի պարզաբանման համաձայն՝ վերոնշյալ նվիրատվությունը կատարել է իր անձնական կանխիկ միջոցներից, որի գոյացման վերաբերյալ ներկայացրել է բանկային հաշվի քաղվածքներ:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1212/8-2024 գրության՝ 2024 թվականի մայիսի 16-ին Արթուր Ռոբերտի Գալստյանի կողմից մուտքագրված թիվ Մ-2229-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում:

1.4 Հանձնաժողովը, Արթուր Ռոբերտի Գալստյանին Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու որոշման կապակցությամբ 2024 թվականի մայիսի 23-ին հասցեագրել է թիվ 01/1589-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ երկրորդ օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ երրորդ օրը, ժամը՝ 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.5 2024 թվականի մայիսի 29-ին պատշաճ ծանուցված Արթուր Ռոբերտի Գալստյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/162/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 2024 թվականի մայիսի 29-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/162/24 արձանագրության կազմման ժամանակ վարույթի մասնակցի կողմից ներկայացված բացատրության համաձայն՝ տարվա սկզբում հայտարարագրել է 10,000,000 ՀՀ դրամ, տարեվերջում հայտարարագրել է 28,000,000 ՀՀ դրամ, տարվա վերջում իր եկամուտը ավելացել է 18,000,000 ՀՀ դրամով, տարվա ընթացքում իր եկամուտը չի գրանցել 2022 թվականի տարեկան հայտարարագրում հասկացել է որ տարվա վերջում ինչ գումար մնացել է դա պետք է հայտարարագրում գրանցվի:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արթուր Ռոբերտի Գալստյանի բացակայությամբ 2024 թվականի մայիսի 30-ին՝ ժամը՝ 11:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1212/8-2024 գրության՝ 2024 թվականի մայիսի 16-ին Արթուր Ռոբերտի Գալստյանի կողմից մուտքագրված թիվ Մ-2229-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ Կուսակցությանը կատարված նվիրատվությունը կատարել է իր անձնական կանխիկ միջոցներից: Միաժամանակ հայտնել է, որ Հայտարարագիրը ներկայացնելու պահին տեղեկացված չի եղել հայտարարագրի լրացման պահանջներին, այդ իսկ պատճառով էլ չի նշել առկա կանխիկ գումարի մասին:

Վարույթի մասնակիցը սույն գործի քննության ժամանակ ներկայացրել է պարզաբանում, որի համաձայն՝ ինքը հանդիսանում է Ղազախստանում գործող ընկերության տնօրեն և համասեփականատեր, որից ստանում է եկամուտ՝ կանխիկ և

անկանխիկ (դրամական փոխանցման համակարգերի միջոցով) եղանակով: Միաժամանակ հավելել է, որ ներդրումներ է կատարել Ռուսաստանում (Ռոստովում) գործող մեկ այլ ընկերությունում, որից նույնպես ստանում է եկամուտ՝ կանխիկ եղանակով: Հավելեց նաև, որ վերը նշված կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացված չեն 2022 թվականի տարեկան Հայտարարագրում, քանի որ Հայտարարագիրը ներկայացնելու պահին տեղեկացված չի եղել հայտարարագրի լրացման պահանջներին:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/162/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Արթուր Ռոբերտի Գալստյանի Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» բաժնում կամ «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում ոչ ամբողջական է հայտարարագրել ստացված եկամտի վերաբերյալ տվյալը, մինչդեռ Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների համաձայն՝ Արթուր Ռոբերտի Գալստյանը 1,000,000 ՀՀ դրամ նվիրատվություն է կատարել կուսակցությանը և Արթուր Ռոբերտի Գալստյանի պարզաբանման համաձայն՝ վերոնշյալ նվիրատվությունը կատարել է իր անձնական կանխիկ միջոցներից: Միաժամանակ, վարույթի մասնակցի կողմից ներկայացվել են բանկային հաշվի քաղվածքներ: Նշված քաղվածքներով հավաստվում է Արթուր Գալստյանի կողմից անկանխիկ դրամական միջոցների (Ղազախստանից ստացված փոխանցում) ստացման փաստը:

3.2 Վարույթի մասնակցի ներկայացրած պարզաբանման համաձայն՝ վերջինս հանդիսանում է Ղազախստանում գործող ընկերության տնօրեն և համասեփականատեր, որից ստանում է եկամուտ՝ կանխիկ և անկանխիկ (դրամական փոխանցման համակարգերի միջոցով) եղանակով, միաժամանակ ավելացրեց, որ ներդրումներ է կատարել Ռուսաստանում (Ռոստովում) գործող մեկ այլ ընկերությունում, որից ստանում է եկամուտ՝

կանխիկ եղանակով: Վերոնշյալ կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացված չեն Արթուր Գալստյանի 2022 թվականի տարեկան հայտարարագրում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Ռոբերտի Գալստյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները սահմանող) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

4.4 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները,* (…), ***(բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված):***

4.5 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն

ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.6 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել **իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:**

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը **ենթակա է կարճման** հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ (…), **վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը,** (…):

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Մասնավորապես, հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալների դեպքում՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը) և

այլ տեղեկություններ: Միաժամանակ, հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, ***եկամտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ,*** շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը և այլ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Ռոբերտի Գալստյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալները.

Արթուր Ռոբերտի Գալստյանի Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցներ» կամ «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում ոչ ամբողջական է հայտարարագրել ստացված եկամտի վերաբերյալ տվյալը, մինչդեռ Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների համաձայն՝ Արթուր Ռոբերտի Գալստյանը 1,000,000 ՀՀ դրամ նվիրատվություն է կատարել կուսակցությանը:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Արթուր Ռոբերտի Գալստյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով էական հանգամանք է այն, եկամտի վերաբերյալ տվյալը բացակայում է Արթուր Ռոբերտի Գալստյանի կողմից ներկայացված Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում:

Արթուր Ռոբերտի Գալստյանի եկամուտը չհայտարարագրելու փաստի առնչությամբ իր գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ այդ պահի դրությամբ տեղյակ չի եղել հայտարարագրման ներկայացման կանոններին, այդ իսկ պատճառով էլ չի նշել առկա կանխիկ գումարի մասին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ իր կողմից նախորդիվ կայացրած որոշումներով (Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներ) ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ

պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն նախորդող վարչական ակտերում առկա փաստական հանգամանքների հետ: Մասնավորապես, սույն դեպքում Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ եկամուտների չհայտարարագրման հետևանքով Կուսակցությանը նվիրատվություն կատարելը չի հիմնավորվել վերջինիս կողմից հայտարարագրված օրինական եկամուտներով: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում *եկամուտները փաստացի ստացվել են մի քանի աղբյուրից:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագրում պետք է ներառվեն հաշվետու տարվա ընթացքում ***ստացված բոլոր եկամուտները և դրանց ստացման աղբյուրները***: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ կանխիկ ստացված դրամական միջոցը՝ որպես եկամտի վերաբերյալ տվյալը ներկայացված չէ Արթուր Ռոբերտի Գալստյանի Հայտարարագրում, ուստի Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Միաժամանակ, Օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանվում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով

վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Արթուր Ռոբերտի Գալստյանի կողմից Հայտարարագիրը ներկայացվել է 2023 թվականի մայիսի 25-ին, որի պայմաններում սույն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական տույժ նշանակելու ժամկետն անցել է:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով և 247-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Արթուր Ռոբերտի Գալստյանի նկատմամբ 2024 թվականի ապրիլի 18-ին հարուցված վարույթը կարճել՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետն անցնելու հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Ռոբերտի Գալստյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արթուր Ռոբերտի Գալստյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղումներ կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ